

ՍՓՅՈՒՌԸ

Ընթերցանության ժամանակ՝ 8 րոպե

Երբ դիտարկում ենք աշխարհում գոյություն ունեցող տարբեր սփյուռքերը, չպետք է մոռանանք հետևյալ երեք կետերի մասին:

Կետ 1. Ներգաղթյալները հաճախ ձեռք են բերում նոր անհատականություն և ինքնություն

Գրեթե բոլոր սփյուռքերի ընդհանրությունն այն է՝ լինի դա հունականը, իռլանդականը, իտալականը թե հայկականը, որ մարդկանց մեծամասնությունն աղքատ երկրներից արտագաղթում է հարուստ երկրներ (կամ տնտեսություններ): Մենք կարող ենք ավելի դիվանագիտորեն արտահայտվել և աղքատ երկրներին կոչել «ձևավորվող կամ զարգացող», իսկ հարուստ երկրներին՝ «առաջատար կամ զարգացած», բայց դաժան իրականությունը լավագույնս բնորոշվում է երկու պարզ բառերով՝ աղքատ և հարուստ:

Իրենց նոր բնակավայրերում հաստատվելուց անմիջապես հետո ներգաղթյալների մեծամասնությունը, որպես կանոն, շփոթության մեջ է հայտնվում նոր՝ հակասական իրականությունից: Մի կողմից, նրանք այդ նոր հասարակության ամենից աղքատ և պակաս ինքնաիրացված անդամներից են (նրանք դեռ չունեն բարձր վարձատրվող աշխատանք, ազատ չեն տիրապետում լեզվին, չունեն սոցիալական կապեր և այլն): Մյուս կողմից, նրանք հանկարծ դառնում են ավելի հարուստ, քան իրենց հայրենակիցները հայրենիքում: Նրանք կարող են իրենց թույլ տալ օգնել իրենց հարազատներին, նույնիսկ (ինչ-որ առումով) դառնալ բարեգործներ՝ զոհաբերելով իրենց վաստակի համեստ բաժինը: Եվ նրանք հայտնվում են երկակի իրականության մեջ:

Միաժամանակ հարուստ և աղքատ լինելու այս անհասկանալի վիճակը կարող է տևել երկար տարիներ: Այդ ժամանակ մարդիկ փոխվում են, երբեմն՝ անձանաչելիորեն: Ուստի, երբ մենք խոսում ենք սփյուռքերի մասին, մենք պետք է հասկանանք, որ դրանք մարդկանց՝ դինամիկ փոփոխվող խմբեր են: Դա վերաբերում է ցանկացած սփյուռքի՝ լինի ռուսական սփյուռքը, որը Ֆրանսիա արտագաղթեց 1917 թ՝ հեղափոխության ժամանակ, թե այն, որը ձևավորվեց, երբ մարդիկ սկսեցին աշխարհի տարբեր երկրներ արտագաղթել Սովետական Միության փլուզումից հետո:

Քանզի հարուստ երկրների մեծ մասն ունի կայացած իրավական համակարգեր և զարգացած տնտեսություններ՝ աշխատանքային շուկաներ, ֆինանսական կամ առևտրային շուկաներ, բոլոր ներգաղթյալները ստիպված են արագ հարմարվել նոր իրողություններին, օրենքներին և կարգավորումներին: Նրանք որդեգրում են նոր արժեքներ և հաճախ փոխում են իրենց համոզմունքների ու հայացքների ամբողջությունը: Իսկ սա նշանակում է, որ նոր ձևավորվող սփյուռքի և հայրենիքի միջև անդունդը գնալով խորանում է:

Թեև անհատականությունն ու ինքնությունը ձևավորվում են վաղ տարիքում և հազվադեպ են փոխվում դրանից հետո, հոգեբանները նկատել են, որ սթրեսի կտրուկ աճը կարող է ետպես փոխել մարդկանց բնավորությունը (և ինքնությունը) նույնիսկ հասուն տարիքում: Արտագաղթը ծայրահեղ սթրեսի աղբյուր է և հաճախ փոխում է մարդկանց ինքնությունն ու արժեքային համակարգը: Որոշ ներգաղթյալներ այդպես էլ չեն կարողանում հարմարվել և բախվում են ինքնության տարատեսակ ճգնաժամերի, որոնք ուղեկցում են նրանց մինչև կյանքի վերջ:



Թարգմանություն.
Բնօրինակը
անգլերենով է



FUTURES STUDIO

Think to connect!

Հետևաբար, երկու հզոր ուժ փոխազդում են՝ արտագաղթյալներին զգալիորեն փոխելով կամ ձևավորելով ներգաղթյալներ: Նախ հյուրընկալ երկրի օրենքներն ու կանոնակարգերը ստիպում են նրանց դառնալ ավելի կարգապահ, զգուշավոր, շրջահայաց և հաշվենկատ: Երկրորդ, ներգաղթի գործընթացների հետ կապված անորոշությունների պատճառով առաջացած ծայրահեղ հուզական սթրեսը մարդկանց ավելի պատրաստակամ և բաց է դարձնում փոփոխությունների հանդեպ:

Կետ 2. Անգործունակ համակարգերը ստիպում են մարդկանց հարաբերություններ զարգացնել

Երբ մարդիկ մի հարուստ երկրից արտագաղթում են մեկ այլ հարուստ երկիր, նրանց հազվադեպ են կոչում ներգաղթյալներ, և նրանք չեն ձևավորում ուժեղ սփյուռքեր: Օրինակ, Կանադայի բնակչության շուրջ 10%-ն ապրում է Կանադայի սահմաններից դուրս, այդուհանդերձ, ո՞վ է երբևէ լսել կանադական սփյուռքի մասին: Ավելի քան տասը միլիոն ամերիկացի ԱՄՆ-ից դուրս է ապրում, սակայն խոսք չկա ամերիկյան սփյուռքի մասին: Արդյո՞ք աշխարհում կան անգլիական սփյուռքեր: Ինչո՞ւ՝ հարուստ երկրներից ներգաղթյալները չեն ձևավորում սփյուռքեր:

Կա երկու բացատրություն: Նախ Բրիտանիայի նման երկրներն ունեն արդյունավետ ինստիտուտներ (առողջապահական ապահովագրություն, օրենքի գերակայություն, գործունակ տեղական ինքնակառավարման կառույցներ և այլն), և մարդկանց մեծամասնությունը հիմնականում կարող է հոգ տանել ինքն իր մասին. նրանց արտագաղթյալ բարեկամները դժվար թե ավելի շատ վաստակեն, քան բրիտանացիները Բրիտանիայում են վաստակում: Սահմանները և հաղորդակցության ուղիները բաց են, ուստի ինչո՞ւ՝ համայնք ձևավորել: Որը՞ կլինե՞ր նման սփյուռքի գոյության իմաստը (raison d'être):

Երկրորդ բացատրությունն այն է, որ կայացած երկրներում մարդիկ այնքան էլ չունեն միմյանց կարիքը: Ոչ գործունակ երկրներում՝ կոռումպացված ինստիտուտներով, մարդիկ ունեն միմյանց կարիքը, որովհետև «ես քեզ համար, դու՝ ինձ» բանաձևն աշխատում է լավագույնս: Այդ պատճառով մարդիկ «խրախուսված» են կառուցելու հարաբերություններ և օգնելու միմյանց: Դա է պատճառը, որ ոչ գործունակ երկրներն ունեն ավելի ուժեղ սփյուռքեր և ավելի շատ «ընկերական կապեր»: Կայացած երկրներում համակարգերը փոխարինում են մարդկային կապերին:

Սակայն, կան մի քանի հատուկ դեպքեր կամ բացառություններ, ինչպիսիք են Իսրայելը, Հյուսիսային Իռլանդիան կամ Հայաստանը, որոնք երբևէ եղել են կամ այսօր էլ գտնվում են պատերազմի կամ բնաջնջման սպառնալիքի ներքո: Այս երկրները՝ աշխարհով մեկ սփռված իրենց համայնքների համար միավորվելու շատ կարևոր դրդապատճառ են: Սակայն, միավորվելու պատճառ ունենալն ու փաստացիորեն միավորվելը երկու տարբեր հասկացություններ են:

Կետ 3. Ազգությունն ընդդեմ Էթնիկ պատկանելության

Դժվար է հասկանալ որևէ սփյուռքի իսկական էությունը՝ առանց հաշվի առնելու ազգության և Էթնիկ պատկանելության հայեցակարգերը: Այս քննարկումն էլ ավելի խրթին է դառնում, երբ թարգմանվում է տարբեր լեզուներով կամ տեղի է ունենում տարբեր մշակույթներում:

Մեր նախկին գեկույցներից մեկում՝ մենք պնդում էինք, որ զարգացող երկրներում շատ մարդիկ խնդիր ունեն հասկանալու և ընդունելու այն սկզբունքը, որ քաղաքացիությունն ու ազգությունն, ըստ էության, նույնական հասկացություններ են: Երկրները, որոնք ազգության և քաղաքացիության փոխարեն շարունակում են շեշտադրում կատարել Էթնիկ, ռասայական կամ կրոնական պատկանելության վրա, աներկբայորեն շարժվում են դեպի աղետալի զարգացումներ:

¹ [ՍԱՐԴԿ ԶՎԵՆԿՈՒՄ ԵՆ ՈՏԵՐՈՎ](#)

Օրինակ, ֆրանսիայում ծնված և մեծացած հայերն ավելի շատ ֆրանսիացի՞ են, թե՛ հայ: Եթևիկ պատկանելությամբ նրանք հայ են, բայց ազգությամբ՝ ֆրանսիացի: Իտալացիների թոռները, որոնք ԱՄՆ են արտագաղթել 1900-ական թվականների սկզբին, գուցե նույնիսկ չկարողանային ապրել այսօրվա Իտալիայում, եթե որոշեին հետ վերադառնալ: Ուստի, մենք պետք է հստակորեն տարբերակենք Եթևիկ պատկանելության և ազգության հայեցակարգերը:

Եզրակացություն

Սփյուռքը շատ տարբեր մարդկանց խումբ է, որն անընդհատ փոխվում է և զարգանում: Սփյուռքի շատ մարդիկ իրականում չեն էլ խորհել անհատականության, ինքնության, ազգության կամ Եթևիկ պատկանելության բարդ հարցերի շուրջ: Այն, ինչի մասին նրանք խոսում են տարբեր սոցիոլոգիական հետազոտություններում, կարող են լիովին տարբերվել նրանց վարքագծից:

Եթևիկ պատկանելությունը կայուն ուժ կամ դրդապատճառ չէ մարդկանց միավորելու համար: Հետևաբար, ինչպե՞ս կարող է Հայաստանի նման պետությունը միավորել իր՝ աշխարհով մեկ սփռված համայնքներին և փորձել օգտագործել այդ ներուժը՝ ի շահ փոխադարձ բարօրության: Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր նրբություններն ու բարդությունները՝ կարծես միայն մեկ ճանապարհ կա՝ Հայաստանը պետք է դառնա այն, ինչը Ջոն Ուինթրոփը² կոչում էր «բլրի վրա շողացող քաղաք»:

Ակնհայտ է, որ բազմաթիվ ներգաղթյալներ ամաչում են իրենց ծագման երկրներից: Իտալական կամ իռլանդական ծագում ունեցող ամերիկացիներն իրենց շատ ավելի պատրաստակամորեն են ասոցացնում Իտալիայի կամ Իռլանդիայի հետ, քան պակիստանյան ծագում ունեցող ամերիկացիները: Սա քննարկման շատ նուրբ թեմա է, բայց եթե մենք ցանկանում ենք ճանաչել սփյուռքերին, հասկանալ ինչպես աշխատել նրանց հետ, ինչպես ներգրավել նրանց և ինչպես կառուցել փոխափոխ հարաբերություններ, մենք պետք է գոնե առժամանակ մի կողմ դնենք քաղաքական կոռեկտությունն ու դատարկ հոետորաբանությունը:

Աշխարհի հայերին միավորելու և Հայաստանի հետ կապելու միակ ճանապարհը քաղաքակիրթ, արդար, հարգալից, բարեկեցիկ և ժամանակակից հայկական պետություն ունենալն է, որը միավորող մագնիսի դեր կկատարի: Հայ լինելը պետք է «հավես» ու հեղինակավոր լինի, իսկ մնացածն ինքնըստինքյան կհաջորդի: Իսկ թե ինչպես Հայաստանը կարող է դառնալ «բլրի վրա շողացող քաղաք» քննարկվել և շարունակվել է քննարկվել մեր գեկույցներում:

*Դավիթ Թամադյան
Հիմնադիր գործընկեր*

Դրույթներ և պայմաններ

© «Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամ

Բոլոր իրավունքները պաշտպանված են

«Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամը («Հիմնադրամ») հաշվետվության նկատմամբ ունի բացառիկ իրավունքներ:

Դուք չեք կարող փոփոխել, խմբագրել, պատճենել, վերարտադրել, հրապարակել, ստեղծել զեկույցի ածանցյալ աշխատանքներ: Ցանկացած չարտոնված վերարտադրություն կամ նյութի այլ օգտագործում կհամարվի Հիմնադրամի մտավոր սեփականության իրավունքի խախտում: Իր իրավունքների ոտնահարման դեմ Հիմնադրամը կարող է դիմել իրավական պաշտպանության միջոցների:

Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում պարունակվող տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար: Չեկույցը գործում է միայն զեկույցում նշված ամսաթվի դրությամբ:

Չեկույցը տրամադրվում է տեղեկատվական նպատակներով և չի պարունակում խորհրդատվություն որևէ հարցի վերաբերյալ: Հիմնադրամը չի երաշխավորում զեկույցում պարունակվող տեղեկատվության/վերլուծության ճշգրտությունը: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում գրված և/կամ սույն զեկույցում պարունակվող ցանկացած տեղեկություն/վերլուծություն օգտագործելու համար, և/կամ զեկույցում առկա ցանկացած սխալների կամ բացթողումների կամ անճշտությունների համար, ինչպես նաև զեկույցի հիման վրա իրականացված կամ չիրականացված գործողությունների համար: Դուք օգտագործում եք սույն զեկույցը ձեր իսկ սեփական ռիսկի ներքո:

Հիմնադրամի կայքից զեկույցը բացելիս կամ ներբեռնելիս, Հիմնադրամը չի երաշխավորում, որ ձեր համակարգիչը պաշտպանված կլինի համակարգչային վիրուսներից կամ վնասակար այլ ծրագրերից: